ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել 188.2 հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 188.2. Ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը, կամ ղեկավարելը

1. Ֆինանսական բուրգը կամ դրա մի մասը ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկ տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները՝

1) որոնց արդյունքում ֆինանսական բուրգում ներգրավվել է խոշոր չափերով գումար կամ գույք,

2) որոնք անձանց, կազմակերպություններին կամ պետությանը պատճառել են խոշոր գույքային վնաս,

3) որոնք կատարվել են պաշտոնեական դիրքն օգտագործելով՝

պատժվում են ազատազրկմամբ երկուսից հինգ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով առավելագույնը երկու տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված արարքները՝

1) որոնց արդյունքում ֆինանսական բուրգում ներգրավվել է առանձնապես խոշոր չափերով գումար կամ գույք,

2) որոնք անձանց, կազմակերպություններին կամ պետությանը պատճառել են առանձնապես խոշոր գույքային վնաս,

3) որոնք կատարվել են կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում են ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

4. Սույն օրենսգրքի իմաստով ֆինանսական բուրգը գույքի ներգրավմանն ուղղված գործունեություն է (բացառությամբ հատուկ թույլտվության (լիցենզիայի) հիման վրա իրականացվող լիցենզավորման ենթակա գործունեության), որով գույք ներդրող կամ ֆինանսական բուրգում առաջարկվող գույքի կամ ծառայության դիմաց վճարում կատարող անձանց առաջարկվող նյութական օգուտը պայմանավորվում է բացառապես նոր ներդրողների ներգրավումից ստացված գույքի հաշվին:

5. Սույն հոդվածում խոշոր չափ և խոշոր գույքային վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից տասնհինգհազարապատիկը չգերազանցող գումարը, իսկ առանձնապես խոշոր չափ և առանձնապես խոշոր գույքային վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգհազարապատիկը գերազանցող գումարը:

6. Սույն հոդվածում գույքային վնասի հաշվարկման համար հիմք է հանդիսանում բուրգում ներգրավված բոլոր անձանց, այդ թվում կազմակերպություններին և պետությանը պատճառված միասնական վնասը:

7. Ֆինանսական բուրգը կամ դրա մի մասը ստեղծող, կազմակերպող կամ ղեկավարող անձը ազատվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված քրեական պատասխանատվությունից, եթե այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և աջակցել հանցագործությունը բացահայտելուն, և եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. <u>Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը</u>

Հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացումը հանգեցրել է հասարակական լայն շերտեր ներգրավելու պոտենցիալ ունեցող ֆինանսական բուրգերի աշխուժացմանը: Ֆինանսական բուրգը, ինչպես անունն է հուշում, ունի հիերարխիկ կառուցվածք, որը նախաձեռնվում է որոշակի անձանց կողմից, ովքեր որոշակի եկամտի ստացման ակնկալիքով անդամագրում են հնարավորինս մեծ թվով ներդրողների: Յուրաքանչյուր մակարդակում նոր ներդրողները վճարումներ են կատարում իրենցից վերև կանգնածներին և վերցնում են վճարումներ ներքև կանգնածներից՝ այսպիսով ստեղծելով փողի վերաբաշխման յուրահատուկ համակարգ, սխեմա կամ կազմավորում: Ներդրումային նախագծի գործունակությունն ապահովելու համար յուրաքանչյուր մակարդակում անդամագրվածների թիվը, ըստ նախատեսվածի, պետք է աճի երկրաչափական պրոգրեսիայով, ինչի համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր նոր ներդրող ապահովի որոշակի թվով նոր անդամների ներգրավումը:

Ֆինանսական բուրգերի առանձնահատկությունն այն է, որ սկզբնական շրջանում ներդրողների համար ամեն ինչ ընթանում է ըստ նախատեսվածի ու խոստացվածի: Այսինքն, անդամագրվածներն այս փուլում հաջողությամբ ստանում են եկամուտներ՝ շահագրգռվելով ներգրավել նոր անդամներ և ծառայելով որպես բուրգի համար կենդանի գովազդ: Այնուհետև ֆինանսական բուրգը, ձնագնդի էֆեկտով տարածվելով ու աճելով, հասնում է մի փուլի, երբ գործնականում անհնար է ներգրավել նոր անդամներ, իսկ արդեն ներգրավված անդամներն ու կատարված անդամավճարները պատկառելի թիվ են կազմում: Արդյունքում, օգտվելով զոհերի թե՛ դյուրահավատությունից, թե՛ կարճ ժամանակահատվածում մեծ գումարներ վաստակելու հեռանկարի գրավչությունից, բուրգի ամենավերևում կանգնածները ստանում են գերշահույթներ, իսկ ներքևի օղակները չեն հասցնում անգամ հետ բերել իրենց ներդրած գումարը՝ բուրգի անխուսափելի փլուզման պատճառով: Առավել հաճախ ֆինանսական բուրգերն իրագործվում են որոշակիորեն ձևափոխված կանոններով, որոնք հիմնականում միտված են ավելացնելու բուրգի բարձր մակարդակներում գտնվողների եկամուտները, քանի որ հենց այս մարդիկ են բուրգի շարժիչ ուժը և գրավչության ապահովողը: Չնայած իրենց բազմազանությանը, ֆինանսական բուրգերն ունեն մեկ կարևոր ընդհանրական հատկանիշ՝ դրանք ներդրողներին խոստանում են մեծ եկամուտներ, ինչը հիմնված է միայն այլ մասնակիցների

ֆինանսական բուրգում ներգրավելու, բայց ոչ՝ որևէ իրական տնտեսական գործունեության (ներդրումներ, ապրանքների առուվաճառք, ծառայությունների մատուցում և այլն) արդյունքում ավելացված արժեք ստեղծելու վրա:

Ֆինանսական բուրգերի գործունեությունը կարող է ունենալ մի շարք բացասական հետևանքներ, ինչպիսիք են.

- <u>Իրական հատվածին հասցված վնաս.</u> մասնակիցների ֆինանսական միջոցների կորուստը հանգեցնում է տվյալ երկրում բնակչության սպառողական պոտենցիալի և խնայողությունների (հետևաբար՝ նաև ներդրումային պոտենցիալի) կրճատմանը: Առավել հաճախ բուրգերի կազմակերպիչները հավաքագրված գումարները ծախսում կամ ներդնում են այլ երկրներում՝ հետագայում հնարավոր իրավական հետևանքներից խուսափելու համար: Արդյունքում, ֆինանսական բուրգերի միջոցով հավաքագրված գումարները, որոնք երբեմն հասնում են հսկայական ծավալների, ուղղակիորեն նվազեցնում են տվյալ երկրի ՀՆԱ-ն:
- <u>Ֆինանսական համակարգին հասցված վնաս.</u> ֆինանսական բուրգերը ֆինանսական համակարգի վրա կարող են բացասական ազդեցություն թողնել երկու ձևով: Նախ՝ այդ բուրգերի միջոցով հավաքագրվում են բնակչության խնայողությունները, որոնք այլ դեպքում կներդրվեին ֆինանսական համակարգում ավանդների, արժեթղթային ներդրումների կամ այլ ձևով: Երկրորդ՝ ֆինանսական բուրգերի կազմակերպիչները երբեմն դիտավորյալ հեղինակազրկում են ֆինանսական համակարգը՝ իրենց սխեման եկամտաբերության և այլ պայմանների իմաստով ներկայացնելով որպես առավել նախընտրելի այլընտրանք բանկերի, ներդրումային կազմակերպությունների կամ այլ ֆինանսական հաստատությունների նկատմամբ:

Ներկայում ՀՀ օրենսդրությամբ ֆինանսական բուրգերի գործունեության որևէ արգելք նախատեսված չէ, ինչն ուղղակի վտանգ է ներկայացնում տնտեսական գործունեության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունների տեսանկյունից:

2. <u>*Կարգավորման նպատակը և բնույթը*</u>

<u>Ֆինանսական բուրգի ստեղծման, դրա կազմակերպմանկամ ղեկավարման քրեականացում.</u>

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ)

առաջարկվում է քրեականացնել ֆինանսական բուրգի ստեղծումը, դրա կազմակերպումը, այն ղեկավարելը:

Նշենք, որ ֆինանսական բուրգերի դեմ պայքարի ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով, դրան տրվում է տարատեսակ իրավական կարգավորում: Օրինակ, **ԱՄՆ-ում** ոլորտը կարգավորվում է **Վիճակախաղերի մասին օրենքի** 1302 հոդվածով, որը հստակ արգելում է գրանցում չունեցող վիճակախաղերի կազմակերպմամբ զբաղվող ցանկացած անձի գործունեությունը, իսկ բրգաձև սխեմաները ներառում են վիճակախաղերին բնորոշ հետևյալ երեք հիմնական տարրերը.

- *Մուտքի վճար*՝ գումարը, որը վճարվում է մասնակից դառնալու համար,
- *Մրցանակ*՝ բուրգում մասնակցությունից փողային կամ այլ շահի ակնկալիքը,
- *Պատահականություն*՝ մասնակցությունից ստացվելիք հնարավոր հատուցման պատահական լինելը՝ կախված նրանից, թե բուրգի որ մակարդակում է անձը գտնվում, ինչպես նաև նրա ներքևում կանգնած մարդկանց գործողություններից:

Որոշ ֆինանսական բուրգեր ԱՄՆ-ում արգելվել են՝ որակվելով որպես արժեթղթերի հրապարակային առաջարկի կամ արժեթղթերով կազմակերպված առևտրի (բորսայական առևտրի կազմակերպման) խախտում:

Մի շարք այլ երկրներում, օրինակ՝ Կանադայում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, ինչպես նաև առանձին նահանգների մակարդակով՝ ԱՄՆ-ում[1] բրգաձև սխեմաներն (ֆինանսական բուրգերն) արգելվում են միայն դրանց որպես բրգաձև սխեմա որակվելու փաստի հիման վրա: Այսպես, **Կանադայում Մրցակցության մասին օրենքով** սահմանվում են բրգաձև սխեմաներին բնորոշ հատկանիշներ, որոնց ի հայտ գալու դեպքում կազմակերպիչները ենթարկվում են քրեական պատասխանատվության: Սա արվել է ցանցային մարքեթինգի և բրգաձև սխեմաների միջև հստակ տարանջատում մտցնելու նպատակով: Համաձայն օրենքի՝ հանցագործություն է համարվում.

- Մասնակիցների ներգրավումից հատուցում ստանալու իրավունք ձեռք բերելու համար գումարներ վճարելը,
- Նախագծին միանալու իրավունքի համար որոշակի ապրանքներ գնելու պահանջ դնելը,
- Մասնակիցներին ապրանքի՝ առևտրային տեսանկյունից ոչ ողջամիտ քանակ վաճառելը,
- Մասնակիցներին վաճառված ապրանքը ողջամիտ առևտրային պայմաններով հետ ընդունելուց հրաժարվելը:

Համանման դրույթներ տեղ են գտել Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի սպառողների շահերի պաշտպանության հարցերը կարգավորող նորմատիվ իրավական ակտերում:

---

[1] Թեև դաշնային մակարդակով ուղղակի արգելք չկա, սակայն նահանգների մեծամասնությունը իրավական ակտերով ուղղակիորեն արգելել է բրգաձև սխեմաների գործունեությունը:

Օրինակ, ԱՄՆ **Կալիֆորնիա նահանգի քրեական օրենսգրքի** 327-րդ հոդվածը[2] դատապարտելի է համարում ցանկացած սխեմա, որի գործունակությունը կախված է նոր մասնակիցների ներգրավման անվերջանալի շղթայից:

Ֆինանսական բուրգերի հետ կապված գործունեությունը քրեականացված է նաև մի շարք այլ երկրներում, ինչպես օրինակ՝ Ալբանիայում, Հունգարիայում և Խորվաթիայում:

Ալբանիայի քրեական օրենսգրքի 143(ա) հոդվածի համաձայն՝ 3-10 տարի ժամկետով ազատազրկման են դատապարտվում շահադիտական նպատակով փոխառությամբ գումար վերցնելով խարդախ կամ բրգաձև սխեմա կազմակերպող և գործարկող անձինք, իսկ նույն արարքը, որն առաջացրել է ծանր հետևանքներ, պատժվում է 10-20 տարի ազատազրկմամբ:

Խորվաթիայի քրեական օրենսգրքի 224(բ) հոդվածի համաձայն՝ 3 տարի ժամկետով ազատազրկման են դատապարտվում շղթայական նամակի կազմակերպման և դրան նպաստելու համար, որում մասնակիցը, ներդնելով գումար, կարող է շահույթ ստանալ միան այլ մասնակիցներ ներգրավելով:

Հունգարիայի քրեական օրենսգրքի 299(գ) հոդվածը պատասխանատվություն է նախատեսում նախապես որոշված եղանակով այլ անձանց գումարների հավաքագրման և բաշխման խաղի կազմակերպման համար, որը նաև ներառում է ռիսկի գործոն, և որում մասնակիցները, միանալով շղթային, իրենց նախորդող մասնակիցներին ուղղակիորեն կամ խաղի կազմակերպչի միջոցով վճարում են գումար կամ մատուցում այլ ծառայություններ: Բրգաձև խաղի կազմակերպման համար Հունգարիայում նախատեսվում է մինչև 3 տարի ժամկետով ազատազրկում:

Ղազախստանի քրեական օրենսգրքի 217 հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ֆնանսական (ներդրումային) բուրգի ստեղծման, այսինքն՝ այնպիսի գործունության իրականացման համար, որի շահույթը պայմանավորված է իրավաբանական կամ ֆիզիկական անձանցից դրամական միջոցների կամ այլ գույքի կամ գույքային իրավունքների ներգրավմամբ, ընդ որում առանց նշված գույքի՝ ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու մտադրության, ապահովելով ստանձնած պարտավորությունների կատարումը առկա ակտիվների վերաբաշխմամբ և մարելով մասնակիցների հանդեպ պարտավորությունները այլ ներգրավումների հաշվին, որը հավասարազոր է ֆինանսական (ներդրումային) բուրգի կամ դրա կառուցվածքային

---

[2] Այդ հոդվածը շարադրված է հետևյալ կերպ. *«Յուրաքանչյուր անձ, ով նախաձեռնում, նախապատրաստում, կազմակերպում կամ գործարկում է ցանկացած անվերջանալի շղթա, մեղավոր է հասարակական հանցագործության համար: Սույն հոդվածի իմաստով «անվերջանալի շղթա» է համարվում գույքի տեղաբաշխման և առաքման ցանկացած սխեմա, որտեղ մասնակիցը վճարում է գումար, որպեսզի նրան հնարավորություն տրվի ստանալ հատուցում մեկ կամ մի քանի նոր անձանց սխեմա ներգրավելու համար, կամ երբ նրա կողմից ներգրավված մասնակիցը ներգրավում է նոր մասնակից: Հատուցումը սույն հոդվածի իմաստով չի նշանակում կամ ներառում սխեմայի մասնակից չհանդիսացող և գնումը սխեմային միանալու համար չկատարող անձանցից վաճառքի դիմաց ստացվող վճարումները»:*

ստորաբաժանման ղեկավարման պատժվում է տուգանքով կամ ազատազրմամբ մինչև երեք տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

Ռուսաստանի Դաշնությունը ներկայում գտնվում է ֆինանսական բուրգերի քրեականացման փուլում: Վերջինիս քրեական օրենսգրքում առաջարկվող նոր 172.1 հոդվածը պատասխանատվություն է սահմանում ֆինանսական բուրգի և/կամ դրա մի մասի ստեղծման, որը հավասարազոր է ֆինանսական բուրգի և/կամ դրա մի մասի ղեկավարման համար, որը պատժվում է տուգանքով կամ հարկադիր աշխատանքների կատարմմաբ, կամ ազատազրկմամբ մինչ հինգ տարի ժամկետով:

Ինչպես երևում է ֆինանսական բուրգերի քրեականացման վերաբերյալ ներկայացված միջազգային փորձից, դրանց դիսպոզիցիայի ձևակերպման հարցում միասնական մոտեցում չկա, այդ իսկ պատճառով Նախագծով ներկայացվող լրացումները որևէ կերպ չեն կարող ամբողջովին նույնացվել ներկայացված երկրներում բրգաձև սխեմաների քրեականացման մոդելի հետ: Միաժամանակ, Նախագծով սահմանված կարգավորումները առավելագույնս հաշվի են առնում ֆինանսական բուրգերի քրեականացման վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության և Ղազախստանի Հանրապետության քրեական օրենսգրքերի ձևակերպումներ:

Նախագծով առաջարկվում է քրեականացնել ինչպես ֆինանսական բուրգ ստեղծել, այնպես էլ այն կազմակերպելը և ղեկավարելը: Ընդ որում, վերը նշված արարքները կարող են իրականավել ինչպես ամբողջ բուրգի, այնպես էլ դրա մի մասի առնչությամբ: Նման մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հաշվի առնելով ֆինանսական բուրգերի տեսակների բազմազանությունը՝ դրանց որոշ տեսակներ էլ կարող են ունենալ առանձնացված մասեր, որոնք էլ իրենց հերթին կարող են ունենալ՝ ինչպես ստեղծողներ և կազմակերպիչներ, այնպես էլ ղեկավարողներ: Դրանցից են, օրինակ, տարածաշրջանային մակարդակով գործունեություն ծավալող ֆինանսական բուրգերը, որոնք տարածաշրջանի առանձին հատվածներում կարող են ունենալ առանձնացված մասեր, որոնց ստեղծման, կազմակերպման կամ ղեկավարման ուղղությամբ գործունեությունը կոորդինացվում է որոշակի անձանց կողմից, որն էլ հենց հանդիսանում է ֆինանսական բուրգի մի մասի ստեղծում, կազմակերպում կամ ղեկավարում: Մեկ այլ օրինակ կարող է լինել «Ութ գնդի» մոդելով գործող սխեման, որի հիերարխիան բաղկացած է 1 կապիտանից, 2 օդաչուից, անձնակազմի 4 անդամից և 8 ուղևորից: Անձնակազմի անդամներից յուրաքանչյուրը պետք է ներգրավի 2 ուղևոր, այդպիսով հանդիսանալով ֆինանսական բուրգի առանձին օղակի ղեկավար, որոնցից ամեն մեկը, օրինակ, տալիս է 1,000 դրամ: Հավաքված ամբողջ գումարը (8,000 դրամ) փոխանցվում է կապիտանին, ով դուրս է գալիս խաղից: Այնուհետև խումբը վերակազմավորվում կամ «կիսվում» է երկու մասի. օդաչուներից յուրաքանչյուրը դառնում է նոր ձևավորված խմբի կապիտան, անձնակազմի անդամները դառնում են օդաչու (յուրաքանչյուր խմբում 2-ական), ուղևորները դառնում են անձնակազմ (յուրաքանչյուր խմբում 4-ական), և սխեմայում ներգրավվում են նոր ուղևորներ (յուրաքանչյուր խմբում 8-ական):

Ինչ վերաբերում է «ֆինանսական բուրգ» հասկացությանը, Նախագծով այն սահմանվում է որպես ֆինանսական բուրգը գույքի ներգրավմանն ուղղված գործունեություն է (բացառությամբ հատուկ թույլտվության (լիցենզիայի) հիման վրա իրականացվող լիցենզավորման ենթակա գործունեության), որով գույք ներդրող կամ ֆինանսական բուրգում առաջարկվող գույքի կամ ծառայության դիմաց վճարում կատարող անձանց առաջարկվող նյութական օգուտը պայմանավորվում է բացառապես նոր ներդրողների ներգրավումից ստացված գույքի հաշվին:

Նախագծով առաջարկվող «ֆինանսական բուրգ» հասկացության սահմանումը տրվել է այնպես, որպեսզի առավելագույնս հաշվի առնվի ֆինանսական բուրգերի տեսակների բազմազանությունը. հատկապես ուշադրության է արժանի ֆինանսական բուրգի այնպիսի դրսևորումը, երբ «ֆինանսական բուրգում կատարված վճարման կամ ներդրման դիմաց առաջարկվում է որոշակի գույք կամ ծառայություն», սակայն այդ վճարումը կամ ներդրումը կատարած անձի օգուտը պայմանավորվում է նոր ներդրողների ներգրավումից ստացված գույքի հաշվին: Այսպիսով Նախագծով առաջարկվող փոփոխությունը նպատակաուղղված է քրեականացնելու ցանցային մարքեթինգի սխեմայով գործունեություն իրականացնող ֆինանսական բուրգերի ստեղծումը, կազմակերպումը և ղեկավարումը:

Նախագծով առաջարկվում են նաև հանցակազմի մի շարք ծանրացնող հանգամանքներ. այդպիսիք են՝ ֆինանսական բուրգում ներգրավված գումարի չափը, , արարքը պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարելը, անձանց, կազմակերպություններին կամ պետությանը պատճառված վնասի չափը, ինչպես նաև հանցանքը կազմակերպված խմբի կողմից կատարելը:

Պատժի տեսակների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ դրանք ընտրվել են՝ ելնելով տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար նախատեսվող պատիժների տեսակների ընդհանուր տրամաբանությունից՝ նախատեսելով այլընտրանքային և հարաբերականորեն որոշակի սանկցիաներ՝ պատժի նվազագույն և առավելագույն չափերի, ինչպես նաև պատժի առավելագույն չափի սահմանմամբ:

3. ***<u>Ակնկալվող արդյունքը</u>***

Նախագծով առաջարկվող լրացման ընդունմամբ ակնկալվում է կանխարգելել Ֆինանսական բուրգերի կազմակերպումը, դրա ղեկավարումը և դրանում անձանց ներգրավելը, ինչը հնարավորություն կտա խուսափել ֆինանսական բուրգերի գործունեության արդյունքում առաջացող վերը նշված բացասական հետևանքներից:

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

«ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման դեպքում

«ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության

1. «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Օրենքներ) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների,ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծեր (այսուհետ՝ Նախագծեր) ընդունմամբ

սահմանվում է ֆինանսական բուրգ հասկացությունը և առաջարկվում է քրեականացնել ֆինանսական բուրգի կազմակերպումը, այն ղեկավարելը և դրանում անձանց ներգրավելը:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայի մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցային միջավայրի վրա ազդեցություն չհայտնաբերվելու եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով սահմանվում է «ֆինանսական բուրգ» հասկացությունը և առաջարկվում է քրեականացնել ֆինանսական բուրգի կազմակերպումը, այն ղեկավարելը և դրանում անձանց ներգրավելը և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն չի նախատեսվում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքների նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծի փաթեթով առաջարկվում է՝

1) քրեականացնել ֆինանսական բուրգի կազմակերպումը, դրանց ղեկավարումը և դրանցում անձանց ներգրավումը,

2) նշված քրեական հանցագործությունների համար նախատեսել պատասխանատվություն՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև երեքհազարապատիկի չափով, կամ ազատազրկում մինչև 12 տարի ժամկետով,

3) սահմանել, որ նշված հանցագործությունների մասով քրեական գործերով նախաքննությունները պետք է իրականացնեն ազգային անվտանգության մարմինները:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում ենք, որ նախագծերի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա կարող է լինել դրական:

Միաժամանակ, հայտնում ենք, որ նախագծերի ընդունման ազդեցության կոնկրետ չափը հնարավոր չէ հաշվարկել, քանի որ հնարավոր չէ կանխատեսել վերոնշյալ հանցագործությունների բնույթը և հնարավոր քանակը: